

# ՎԵՆՋՈՐԱՅԻՆ ԿԱԱՅԻՏԱՎԻ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ III - (ՎԿՆԾ III)

Տեղակայությունը՝  
Տարածաշրջանային

Ծրագրի համարը:  
53257

Բիզնես ոլորտ:  
Հեռահաղորդակցություն, Մեդիա և Տեխնոլոգիա

Պետական/մասնավոր՝  
Մասնավոր

Բնապահպանական կատեգորիա՝  
FW

Հաստատման ամսաթիվը:  
23-ը փետրվարի 2022թ.

Կարգավիճակը՝  
Հայեցակարգն ուսումնասիրվել է

Ծրագրի ամփոփ փաստաթղթի  
անգլերեն արբերակի  
հրապարակման ամսաթիվը՝  
14- ը հունվարի 2022թ.

## Ծրագրի նկարագրություն

ՎԶԵԲ-ի վենչուրային կապիտալի ներդրումային III ծրագիրը (ՎԿՆԾ III) հանդիսանում է Բանկի վենչուրային կապիտալի ներդրումային ծրագրի երկու նախորդ շրջանակների՝ ՎԿՆԾ I և ՎԿՆԾ II շարունակությունը: Այն նպատակ ունի փորձառու վենչուրային կապիտալի համաներդրողների հետ միասին Բանկի գործունեության երկրներում ներդրումներ կատարել վաղ և աճման փուլում գտնվող տեխնոլոգիական ընկերություններում սեփական կապիտալի և սեփական կապիտալի հետ կապված գործիքների միջոցով (ներդրումների չափը մինչև 25 մլն եվրո): Ներդրումներն ուղղված են տրարարական և բարձր աճ ունեցող փոքր և միջին ընկերություններին, որոնք հիմնականում չեն սպասարկվում սահմանափակ վենչուրային կապիտալի համայնքի կողմից նպատակ ունեն լրացնել շուկայում առկա վենչուրային կապիտալի բացը:

## Ծրագրի նպատակները

ՎԿՆԾ III-ի հիմնական նպատակը նորարարական տեխնոլոգիաների զարգացումն ու առևտրայնացումն է, ինչպես նաև առաջատար վենչուրային կապիտալների ներգրավումը Բանկի այն երկրներ, որտեղ վենչուրային կապիտալը դեռևս շատ ցածր է, իսկ վենչուրային կապիտալի Էկոհամակարգերը դեռ նոր են:

Մյուս հիմնական նպատակներն են՝ i) ՎԿՆԾ շրջանակները հնարավորություն են տալիս Բանկին ՎԶԵԲ տարածաշրջանում խթանել գիտելիքահեն տնտեսությունները, զարգացնել տեխնոլոգիական Էկոհամակարգերը և աջակցել նորարարությանը, ii) ՎԿՆԾ շրջանակների միջոցով Բանկը կարևոր դեր է կատարում տարածաշրջանում առկա՝ վենչուրային կապիտալի ֆինանսավորման բացը լրացնելու գործում, iii) ՎԿՆԾ շրջանակները Բանկին թույլ է տալիս պահպանել, ավելի բարձր ռիսկերով/ավելի բարձր եկամտաբերությամբ ներդրումային հնարավորությունների մասնագիտացված պորտֆելային մոտեցումը:

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Վաղ անցումային ազդեցության ցուցանիշը՝ 80

Ակնկալվում է, որ ՎԿՆԾ- III շրջանակը կնպաստի մրցակցային և կայուն անցումային որակներին, քանի որ այն ուղղված է նորաստեղծ նորարարական բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ընկերությունների զարգացմանը, ինչպես նաև ձեռնարկությունների համար վենչուրային կապիտալի հասանելիության մեծացմանը, ինչը ՎԶԵԲ-ի տարածաշրջաններում դեռևս վաղ ձևավորման փուլում է:

Ներդրումներ կատարելով շուկայում տեխնոլոգիաների վրա հիմնված լուծումներ առաջարկող առաջին թվային ընկերություններում՝ ՎԿՆԾ III-ն ուղղակիորեն կնպաստի թվային անցումն արագացնելու ՎԶԵԲ-ի ռազմավարական կապիտալի շրջանակի առաջնահերթությանը: Ակնկալվում է, որ ՎԿՆԾ -ի գործունեության հետագա ընդլայնումը ՎԶԵԲ-ի տարածաշրջանում, ուր վենչուրային կապիտալի շուկաները դեռ ձևավորման վաղ փուլերում են, կնպաստի հաջող ձեռներեցության և վենչուրային կապիտալի՝ որպես ակտիվների դասի շարունակական ցուցադրմանը:

## Հաճախորդը

Յուրաքանչյուր ընկերություն՝ անհատապես:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

250,000,000.00 եվրո

# Ծրագրի ընդհանուր գումարը

250,000,000.00 եվրո

## Հավելյալություն

Անկախվում է, որ Շրջանակը կունենա երկու լրացուցիչ դերակատարում. (i) տեղական համաներդրողների աջակցություն համաշխարհային վենչուրային կապիտալ ներդրումներին. և (ii) տեղական վենչուրային կապիտալի սինդիկացիոն շուկայի ընդլայնում:

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Շրջանակն ինքնին Բանկի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության (2019 թ.) ներքո դասակարգված չէ, այնուհանդերձ, յուրաքանչյուր ենթածրագիր կդասակարգվի է ըստ կոնկրետ դեպքի և ենթակա կլինի անհատական բնապահպանական և սոցիալական փորձաքննության (ԲՄՓ) և GET փորձաքննության՝ կոնկրետ ծրագրերի և հաճախորդների համար: Կախված ենթածրագրի կատեգորիայից՝ համապատասխան ԲՄՓ-ն պետք է հավաստի, որ ենթածրագրերից յուրաքանչյուրը կառուցված է Բանկի՝ Գործունեության նկատմամբ պահանջներին համապատասխան:

## Ընկերության կոնտակտային տվյալները

Բախրոմ Իբրագիմով  
02073386000

## Ծրագրի ամփոփ փաստաթղթի վերջին թարմացումը՝

2022թ.-ի հունվարի 14:

## Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու նպատակով ՎՁԵԲ- ի կողմից կիրառվող մոտեցումների վերաբերյալ:

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար կապ հաստատեք հաճախորդի ընկերության հետ:

ՎՉԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմեք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

Պետական ոլորտի ծրագրերի համար այցելեք [ՎՉԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ [procurement@ebrd.com](mailto:procurement@ebrd.com)

## Ընդհանուր հարցումներ

Կարող եք կատարել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

## Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ](#)-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում են այն ուղիները, որոնց միջոցով ՎՉԵԲ-ն իրականացնում է «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացմանը» նպաստելու իր հանձնառությունը: ԲՍՔ-ն և ԳՊ-ները ներառում են հատուկ դրույթներ, համաձայն որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն հանրային տեղեկատվության և խորհրդակցության վերաբերյալ ազգային օրենքների կիրառելի պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և դրանց լուծումները հեշտացնելու նպատակով: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերից և ազդեցությունների բնույթից ու մասշտաբից՝ ՎՉԵԲ-ն անհրաժեշտության դեպքում իր հաճախորդներից լրացուցիչ պահանջում է հրապարակել տեղեկատվություն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների վերաբերյալ կամ նպատակային խորհրդակցություններ անցկացնել շահագրգիռ կողմերի հետ, դիտարկել նրանց կարծիքներն ու արձագանքել դրանց:

Այս մասով ՎՉԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունները նկարագրված են [ԲՍՔ](#)-ում:

## Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՉԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակն (ՀՎԳՏԳ) նպաստում է լավ կառավարմանը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ոլորտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն:

Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետևերդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն պատասխանատու է նաև ՎՉԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում խարդախության, կոռուպցիայի և չարաշահման վերաբերյալ մեղադրանքների հետաքննության համար: Բանկի ներսում և դրա սահմաններից դուրս ցանկացած անձ ով, խարդախության կամ կոռուպցիայի վերաբերյալ կասկածներ ունի, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ [compliance@ebrd.com](mailto:compliance@ebrd.com): Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր, այդ թվում՝ անանուն զեկույցները: Չեկույցները կարող են ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկատվություն տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

## Տեղեկատվության քաղաքականության հասանելիություն (ՏՔՀ)

ՏՔՀ-ն ուժի մեջ է մտել 2020թ. հունվարի 1-ից և սահմանում է, թե ինչպես է ՎՉԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկատվությունը և խորհրդակցում իր շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի նպաստի իր ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություններ են առկա ՎՉԵԲ-ի կայքում:

Կարող եք կատարել կոնկրետ տեղեկատվության հարցումներ՝ օգտագործելով [ՎՉԵԲ -ի հարցումների ձևաթուղթը](#):

## Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՉԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ հավանաբար կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու համար, ինչպես նաև պարզել, արդյոք Բանկը գործել է համաձայն իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկատվության քաղաքականության հասանելիության](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթների, և անհրաժեշտության դեպքում վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

ԾՀԱՄ-ի և նրա մանդատի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#), ուր կարող եք տեղեկանալ, թե ինչպես կարելի է վերանայման Դիմում ներկայացնել, կամ կապ հաստատեք ԾՀԱՄ-ի հետ [ipam@ebrd.com](mailto:ipam@ebrd.com) էլեկտրոնային փոստի հասցեով: